միեւնոյն նպատակաւ մտադրած էր՝ քանի մ'ամիս վերջ դառնալ։ Հ. Պողոս իբրեւ քարոզիչ կ'առաքուի յետոյ ի Կարին, և հուսկ կը վախճանի ի Ս. Ղազար։

*
* *

Այս երկու վաստակաւորներու արդեանց շնորհիւ Մուրատեան հրիտակը այդպէս ձեւանալէն վերջ՝ պէտք ենք խոստովանիլ այժմ, որ զայն ձեռք բերելու առաջնակարգ դերն ունեցողն ալ բազմերախտ Հ. Յարգիս Թէոդորեանն է «հանդերձ վշտօք և տառապանօք և վտարանդիւք յապաշնորհաց». (Անդ)։ Եթէ անձնական է այս վկայութիւնը, ահա հեղինակաւոր պաշտօնական վկայութիւն մը՝ որ և միանգամայն նախկին բազմավիշտ գործակցի է։

Հ. Կարապետ Եսայեանի՛ ուղղուած է թուղթս՝ որ հետեւեալն է.

«Ջուրախական ինչ լուր հանդերձեալ եմ աւետարանել Վերապատուութեանդ, և քեւ միաբան Հարց մերոց վարդապետաց՝ ժողովելոցն ի խորհրդարանիդ այդր, եթէ յուզմունք և վարանմունք պէսպէս ձախողակ խորհրդոց, յորս տառապէր հասարակութիւնս զոգցես յերկուց ամաց հետէ՝ զիրակութեանց և զկենաց իսկ Հ. Յարգսին վասն չունելոյ ի նմանէ յատուկ ինչ գիր, ահա Աստուծով վախճան առին, զի փոխանակ նամակի՝ ողջ մատեան մի ընկալաք՝ յորում բովանդակին մի առ մի կարգաւ երկամեայ անցք՝ որք անցեալ էին ի մէջ իւր և Մուրատեանց վասն հրիտակի իրաւանց որք և աղքատ մանկաւոյն։ Ի Տեառնէ եւեթ յաջողեալ է նմա յաղթական հանդիսանալ ի գազանամարտի, որ դիւրագոյն եւս էր թերեւս, քան թէ ի խուռն ախտակիր մարդկան գազանացելոց չահատակիլ, և ի կատարածի տանիլ զմրցանակն փառօք։ Զի յատենի կացեալ Բրիտանացւոց՝ հանդէպ նեղչաց իւրոց ոսոխացն կուռ սպառազինութեամբք իրաւացի փաստից, արդարացուցանէ նախ զանձն և զգործ իւր, որ անիրաւ ամբաստանեալն էր ստութեամբ. ապա ի կարգ անկեալ դատաւորացն՝ նմին տան և զիրաւունս վերստին ստանալոյ զկէս արծաթոյ հրիտակին, որ ի պահ եդեալն էր ի տան զանձուց տէրութեանն։ Այլ ի ստիպել ատենին վճարել և զվաշխ հրիտակին, վարանին ոսոխքն զի քանզուին էր բովանդակ տան իւրեանց, վասն որոյ և խոնարհին յոյժ յոյժ, և ի Հ. Յարգսի գրութիւնն եւեթ ապաստանին, զի այլուստ անմարթ էր նոցա ելս ինչ իրաց և ազատութեան գտանել, և մտանեն ընդ նմա ի նոր իրաւախոհութիւն, զոր և ըստ հրամանի հասարակութեանս յանձն առնու Հ. Յարգիս, և վերստին հաստատեալ զայն ամենայն նպաստաւոր պայմանս որ յառաջնում իրաւախոհութեան դաշնագրին, և մասն ինչ միայն ընկալեալ ի վաշխէ անտի, տայ գիր և առնու նոր իրաւախոհութեան, և Աստուծով հաշտութիւն լինի ի մէջ նոցա և մեր՝ ի հիացումն մեծ ամենայն բարեատեաց կուսակցաց նոցա։ — Այժմ չմնայ այլ հոգ Հ. Յարգսի, բայց միայն անցուցանել զարծաթն որ ի ձեռին իւրում է՝ յԵրուսաղէմ, և դառնալ այսր ի վանս, որ միոյ ամբողջ ամի կարօտ է ասէ՝ սակս չլինելոյ յաջողութեան փոխանակագրոց որպէս յառաջն՝ ի պատճառս անկանելոյ արժէից դրամաթղթոց ընկերութեանն». (գր. Սումաղեան Աբրահայր, 1833, Ապրիլ 27)։

Արդիւնաշատ Հ. Յարգսի այս անձնազոհ ծառայութիւնը հանրածանօթ է, և պիտի մնայ յաւէտ անջնջելի՝ մեր վարժարանական պատմութեան մէջ։

Անտարակոյս նոյնքան համապատիւ պիտի ըլլար նաեւ անոր կրթական դերը իբրեւ Տեսուչ Մուրատեան և Ռափայէլեան վարժարաններուն մէջ՝ եթէ ցվերջ իր գործունէութիւնը անաղարտելի մնար հոն, ինչ որ ղժբախտաբար անձնական կիրքը երկփեղկեց զայն ի սպառ, մոռցուց խոնարհամտութիւնը և հասարակութեան առջեւ կատարած իր Ուխտը, որ էր «մինչև ցհեղումն արեան» անպայման հնազանդիլ իր օրինաւոր Մեծաւորներուն կարգադրութեանց։ Մի միայն ասով ընդելուզուած իր ունեցած գործունէութիւնը՝ պիտի ընէր զինքը Աստուծոյ և մարդկան առջեւ՝ Աւետիքեաններու, Աւգերեաններու և Ալիշաններու պէս իսկապէս մեծ, որոնք գիտցան ի հարկին «ծռիլ՝ բայց չկոտրիլ»։ Ուստի հիանալով հանդերձ Մուրատեան հրիտակի շուրջ իր անմրցելի գործունէութեան վրայ՝ պէտք է ի գութ և ի կարեկցութիւն շարժի ամէն Հայ սիրտ անոր այդ աւաղելի ղժբախտութեան մասին՝ ի նշան խորին երախտագիտութեան։

Մուրատեան և ապա նաեւ Ռափայէլեան խնդիրներու համար անմոռանալի անուն